

Գրական աշխատանքի և կապիտալի փոխհարաբերության հարցը «Արձագանք» պարբերականում

Դանիելյան Տարոն

Հանգուցային բաներ. Ար. Հովհաննիսյան, Ս. Տեր-Մելքիսեդեկյան, Թիֆլիս, պարբերական մամուլ, «Վարժարան» հանդես

19-րդ դարի 60-ական թվականներին Ռուսական կայսրության տարածքում սկսված բարեփոխումների ալիքը հասավ նաև Կովկասի կենտրոն Թիֆլիս, և դրա արդյունքում գրահրատարակչական ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները ձևավորեցին և զարգացրին արտադրական այն գործընթացները, որոնք դեռևս հատուկ չէին այս բնագավառին: Մրցակցային դաշտի և տեխնիկական ու տեխնոլոգիական նորարարությունների գործոնների ազդեցությամբ պարբերական մամուլի համակարգը «ձևավորվեց արևմտաեվրոպական օրինակով որպես կապիտալիստական ձեռնարկություն, և ընդունեց նաև նրա որոշ առանձնահատկությունները» [22, 28]: Արդյունքում դեռևս այդ փոփոխություններին անպատրաստ հասարակությունը նկատեց «հակասություններ գրական աշխատանքի և կապիտալի միջև» [21]:

Այս հակասությունների շուրջ էին հաճախ ծավալվում ազատական և պահպանողական հոսանքների բանակները ներկայացնող մտավորականների բանավեճերը: Կարծիքների մեծ անջրպետ էր առաջացել Ռուսական կայսրության ոչ միայն քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման հեռանկարների շուրջ, այլ նաև առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում պարբերական մամուլի դերին և նշանակությանը. ներկայացվում էին ոլորտի զարգացման հայեցակարգեր, տարբեր հարցերի շուրջ առաջացած դիրքորոշումներ, ու հաճախ էին հնչում քննադատություններ գրականության և մամուլի ոլորտը տնտեսականացնելու և լրագրության իրական գործառնությունները անտեսելու վերաբերյալ:

Այս խնդիրը մշտապես քննարկման առարկա է եղել նաև «Արձագանք» պարբերականում, որի տարբեր համարներում լույս էին տեսնում պարբերական մամուլի վրա տնտեսական գործոնի ազդեցության ձևերի, դրա դրական և բացասական կողմերի մասին տարբեր հրապարակումներ:

1881թ. Աբգար Հովհաննիսյանը, հիմնադրելով իր նոր շաբաթաթերթը՝ «Արձագանքը», «օրական հարցերի պատասխանը տալու» նպատակն ուներ [Տե՛ս 4]: Պարբերականը հիմնադրվեց անցումային այնպիսի շրջանում, երբ կառավարությունը սկսել էր հրաժարվել քսան տարի առաջ սկսած ազատական բարեփոխումներից. Ալեքսանդր Երկրորդի սպանությունից հետո գահին ընդունած Ալեքսանդր Երրորդի կարգադրությամբ երկրի զարգացման ուղղությունը կտրուկ փոխվել էր: Կառավարությունը ձեռնամուխ էր եղել «կոնսերվատիվությունների և 1860-ական թվականների ազատական ժառանգության պահպանողական վերաքննությանը» [24, 4]:

Վերափոխումներ իրականացվեցին նաև պարբերական մամուլի համակարգում, որի առավել ազատ զարգացման հայեցակարգի ջատագով, «մտքի և սրտի բռնապետ» Մ. Լորիս-Մելիքովի դիրքորոշումը, այն է՝ *«ապահովել մամուլի հրապարակայնությունը և հանրային հարցերի հավասարակշիռ քննարկումը, սակայն դադարել կրքերի անպատժելի բորբոքումը, անհատներին ծաղրելը, ինչև օգտագործվում է շահադիտական նպատակներով որոշ պարբերականների կողմից»* [19, 595], զիջեց Կ. Պրեդոնոսցևի՝ մամուլի ազատության դեմ ներկայացրած փաստարկներին:

Կ. Պրեդոնոսցևի կարծիքով ամենօրյա մամուլն իր մեջ կուտակում է ճակատագրական, գաղտնի, քայքայիչ ուժ, որը կախված է մարդկության վրա և ծնում է հանրային խոցեր. ստեղծում է լրագրողների, գրողների և ձեռներեցների մի դաս, որը հարստանում է գրչով: Իսկ երբ շուկան է թելադրում, ապա ամենատաղանդավոր լրագրողը պետք է գրի այն, ինչ թելադրում է խմբագիրը: Արդյունքում լուրջ մամուլի լրջմիտ գործիչները անդադար բողոքում են տվյալ դասի բազմացումից, բայց ստիպված են նրանց հետ հաշվի նստել: Սակայն «այդ դասի ներկայացուցիչները հասարակության մակաբույծներն են» [23]:

Թիֆլիսում տնտեսական հարաբերությունների զարգացման հետ միասին կերպարանափոխվում էր պարբերական մամուլի համակարգը, և լրագրությունը օգտագործվում էր որպես որոշ անհատների կամ խմբերի գաղափարների քարոզչության վճարովի տարածման միջոց: Պատահական չէ, որ «Արձագանք»-ի հիմնադրումից 15 տարի անց Ա. Հովհաննիսյանը հայտարարեց, որ «հայոց լրագրական աշխարհում երևացել են գրական բորսային ֆակտորներ, որոնց համար ամեն մի գաղափար և ամեն մի անձնավորություն նոյն նշանակությունն ունի, ինչ-որ արժեթղթերը բորսայում...: Գտնվում են հայ խմբագիրներ, որ իրենց առևտրի նիւթը դարձնում են գաղափարներն ու գաղափարական անձինքները» [8]:

Գաղափարների ու գաղափարական անձանց ապրանքայնացման գործընթացը լրագրության բնագավառում բարձր մակարդակի էր հասել հատկապես այն երկրներում, որտեղ հաստատվել էին կապիտալիստական հարաբերությունները: Այս առումով հետաքրքիր դիտարկում է արել ռուս լրագրող Մ. Լեմկեն: Նա նշում էր, որ 19-րդ դարի 60-70-ական թվականներին թերթերի հրատարակիչներ էին հիմնականում կա՛մ լրագրողները, կա՛մ գաղափարապես հաստատական համոզմունքներով մարդիկ: Նրանք լրագրության աշխարհ մտնում էին իրենց կապիտալով և բացառապես գաղափարով: Գործարարները այս ոլորտից հեռու մնացին այնքան ժամանակ, մինչև պարբերական մամուլի եկամուտը չավելացավ: Հասկանալով, որ այս բնագավառը դառնում է շահութաբեր, «կոմերսանտի կապիտալը գնաց դեպի լրագրություն, որպես արդյունաբերության նոր ճյուղ» [20, 25]:

Ա. Հովհաննիսյանը իր երկու պարբերականները («Փորձ» և «Արձագանք») հիմնադրել է իր կապիտալով և այն համոզմունքով, որ մամուլը, գրականությունը անհամատեղելի են շահասիրության հետ:

Քննելով հայ մամուլի զարգացման գործը Ռուսական կայսրության տարածքում՝ «Արձագանք»-ի աշխատակիցները նկատում են, որ այն գրեթե միշտ հիմնադրի անձնական «գոհաբերության» հաշվին է գոյատևել. թերթերի հիմնադիրները իրենց գրպանի հաշվին են վճարել մշտական թղթակիցներին: Չնայած համեստ աշխատավարձին, որը չէր կարելի համեմատել եվրոպական հայտնի պարբերականների նշանավոր աշխատակիցների վարձատրության հետ, այնուամենայնիվ պարբերականները հենց դրա շնորհիվ են շարունակել տպագրությունը [տե՛ս 9]:

Ա. Հովհաննիսյանի պարբերականներին աշխատակցելուն երկու կարևոր հանգամանք է նպաստել. նախ՝ «շատերն էին ջանում նրա տնօրենի սիրտը շահել, աչքի առաջ ունենալով նրա դիրքը և հուսալով այդ դիրքից օգտվել այս կամ այն բանկում կամ Ներսիսյան դպրոցում պաշտոն ստանալու համար» [13, 140]: Երկրորդ՝ Ա. Հովհաննիսյանը «գիտեր հարգել գեղարվեստի ծառայողներին, հարգանքով վերաբերվել նրանց գրչի արդյունքներին, այլև չժողոնել, որ նոքա նյութական մեծ նեղություն կրեն» [18, 688]: Նա ժամանակի «այն եզակի խմբագիրներից էր, որը բարձր հոնորար էր վճարում հայ գրողներին, խրախուսում նրանց աշխատանքը, դրանով իսկ ապահովում հայ նոր գրականության զարգացման բնականոն ընթացքը» [11, 427-428]:

Պատահական չէ, որ ստեղծագործող մարդկանց վարձատրության խնդիրը նույնպես եղել է ուշադրության կենտրոնում: Հայ հասարակությունը «թղթի փող» տալ դեռ սովոր չէր [տե՛ս 5], և մամուլն ու գրականությունը զարգանում էին միայն ու միայն հովանավորչության շնորհիվ: «Նիւթական միջոցներից գուրկ հեղինակները կամ աշխատասիրողները իսպառ պիտի հրաժարունէին գրիչ ձեռք առնելուց, եթէ իրանց յոյսը դրած չլինէին առատասիրտ բարերարների օժանդակութեան վերայ, որոնց ձեռնտուութեամբ շատերը յաջողած են լոյս աշխարհի հանել իրանց մտաց ծնունդը. ապացոյց են մեր գրադարանների մեջ գտնուած հին և նոր հրատարակեալ գրեանց շատերի ճակատը դրոշմուած բարերարների անունները» [6]:

Միևնույն ժամանակ խմբագրության աշխատակիցները նկատում էին, որ «լրագրապետների անձնական հարստութիւնն էլ գրականութեան մէջ երբեմն անգօր է հրաշքներ յառաջ բերելու: <...> Լրագիրը պետք է, որ ինքը ապահովացնէ իւր նիւթական դրութիւնը, ապա թէ ոչ խմբագիրը, հարուստ լինի նա, թէ ոչ, - կարող է հաշուէկշռի բացը լրացնել մի տարի, երկու տարի, աւել կամ պակաս և ապա ձեռք վերցնել անվերջ դրամ կլանող մի ձեռնարկութիւնից: Անիրաւութիւն կլինէր պահանջել, որ հարուստ հայ լրագրապետը անխնայ գոհէր յուր բոլոր անձնական հարստութիւնը մի գործի, որ երբէք չէ խոստանում վերադարձնել իւր ծախսածը» [9]:

Հայկական պարբերականների բաժանորդագրությունների ցածր թիվը մշտապես մտահոգության թեմա է եղել բոլոր հրատարակիչների համար: Հայ

պարբերական մամուլի համակարգում միակ պարբերականը, որ կայուն թվով բաժանորդներ է ունեցել, Էջմիածնում լույս տեսնող «Արարատ» ամսագիրն է եղել, որին պարտադրված բաժանորդագրվել են Ռուսական կայսրության հայ հոգևորականները:

«Արձագանք»-ի էջերում իրավիճակն այսպես է բնութագրվում. «Այսպիսի պատուի ոչ մի հայ թերթ տակավին չէ հասել, բայց և ոչ մի հայ թերթ այնքան քիչ կարդացող չունե, որքան «Արարատ»-ը: Տարեկան բաժանորդագիրն վճարելով և անկանոն ու երբեմն էլ շատ ուշ քանի մի համարը միասին ստանալով, թե գիղի և թե քաղաքի քահանայն հագիւ հագ թերթում է և շատ քիչ բան կարդում: Նոյնիսկ ամենաջերմեռանդաբար ամենայն հայ հրատարակութիւն կարդացողները անտարբեր ու սառն են վերաբերվում դէպի «Արարատ»-ը: Քահանայք իրանց բաժանորդագիրն «տուրք» են համարում, իսկ աշխարհականները ստորագրվում են միայն Ս. Աթոռին «օգնելու» համար» [10]:

Մինևույն ժամանակ «Արձագանք»-ի խմբագրությունը անտարբեր չի մնում, երբ փակվում են թեմատիկ ուղղվածության պարբերականները, խոստովանելով, որ շատ դեպքերում լրագրի կամ հանդեսի փակվելու պատճառը անտարբերությունն է: Օրինակ, նա մտահոգվում է, որ «Վարժարան» հանդեսը փակվում է հենց մանկավարժների և այլ պարբերականների անտարբերության պատճառով. պարբերական մամուլը չի օժանդակում նրան իր խորհուրդներով, թեմական տեսուչներն ուրանում են նրա գոյությունը, ուսուցիչներն ավստոսում են հինգ ժուրիի վճարել, «նախապատիւ համարելով ինքնագովութեամբ ու բամբասանքով զբաղուիլ, իսկ ուսումնարանաց վարչութիւնները, որոնք կոպէկներին մեծ նշանակութիւն են տալիս, երբ դա իրանց ուսուցիչների մտաւորականին է վերաբերում, ի հարկէ աւելորդ են համարում իրանց մատենադարանների համար մի օրինակ բերել տալ այդ թերթից» [3]:

Շեշտելով, որ Ռուսաստանում հայերն ունեն 400 ուսումնարան, սակայն միակ մանկավարժական ամսագիրը 165 բաժանորդ ունի, հայ վարժապետների թիվը անցնում է 900-ից, սակայն ամսագիրն ստանում է 37 վարժապետ (առանց Գայանյան ուսումնարանի վարժապետների), խմբագրությունը արձանագրում է «Թիֆլիսի թէմը տուել է «Վարժարանին» երկու բաժանորդ, Երևանի թէմը՝ 0... «Թուերը չեն ղեկավարում աշխարհը, բայց նոքա ցոյց են տալիս, թէ նա ինչպէս է կառավարվում», – ասել է Գեօրջէն» [3]:

Տարբեր հրապարակումներում խմբագրակազմը անդրադարձ է կատարել խմբագրություն – բաժանորդ փոխհամագործակցության խնդիրներին, լսարանի սոցիալական նկարագրին՝ նկատելով, որ մամուլի զարգացման «դրամական ծանրությունն» անմիջապէս ընկնում է միայն այն մարդկանց վրա, որոնք ստանում են բոլոր հայ լրագրերը, սակայն մինևույն ժամանակ շեշտելով, որ մեծ մասը ստանում էր մեկական պարբերական: Կովկասի լրագրային վիճակագրությունը վերլուծելով՝ Սարիբեկ Տեր-Մելքիսեդեկյանը նկատում է, որ Կովկասի հայ լրագրությունը

պահպանվում է նյութապես անապահով, աղքատ և հասարակ դասի կողմից, իսկ հարուստները, որոնք «հազի կարողանում են ռուսերեն վանկեր կապել, բայց այնուամենայնիւ ստանում են մի քանի ռուս լրագրներ և ոչ մի հայ լրագիր» [1]:

Մամուլի զարգացման վրա ազդող ևս մեկ բացասական գործոն էր բաժանորդների անպարտաճանաչությունը: Փաստենք, որ «Արձագանք»-ը մոտ հինգ տարի այդ մասին ոչինչ չէր տպագրում, նույնիսկ քննադատության էր ենթարկում մյուս պարբերականներին՝ նշելով թե «եթե տարուայ ընթացքում հարիւր խմբագրական յոդուածներ են հրատարակել, նոցա կէսը կամ բաժանորդների համար կամ բաժանորդագրութեան անունով են գրուած» [17]: Սակայն հրատարակիչը հետագայում խոստովանում է, որ այդ ծախսը փակում են իրենք: Եվ քանի որ ապառիկ բաժանորդագրությունը ազդում էր պարբերականի անխափան տպագրման վրա, Ա. Հովհաննիսյանը հրաժարվեց ապառիկ բաժանորդագրության պայմաններ առաջարկելուց:

19-րդ դարավերջին տեխնիկական նոր սարքավորումների և տեխնոլոգիական նոր միջոցների օգտագործումը լրագրությունը վերածեց բազմատարր համադրական ստեղծագործական համակարգի, և մրցակցային դաշտում արդեն կարևոր էին դառնում ոչ միայն պարբերականների բովանդակությունը, այլ նաև մատուցման ձևը: Ընդ որում տեղեկույթի բովանդակության և մատուցման ձևի հաջողությունը արդեն պայմանավորվում էր հաղորդագրության մատուցման միջոցներով: «Արձագանք»-ի խմբագրակազմը նույնպես նշում էր, որ «լրագրությունը առաջ գլխատրապես քարոզչութեան մի գործօն էր, մաքառման մի զենք, իսկ այժմ միաժամանակ և մի տեսակ արդիւնաբերութիւն է, և հետևաբար նա պիտի զինուէր կարևոր պարագաներով: Գիտութեան և արուեստների բոլոր հրաշալիքները ծառայում են այսօր մամուլի յառաջադիմութեան գործին. մեքենագիտութիւն, շոգի, էլեքտրականութիւն, էլեքտրաքիմիան, գալուանօսլլաստիկան, վայրկենական լուսանկարչութիւնը, ֆոտօգրաւիւրը, հեռախօսությունը և այլն, և այլն – այս բոլորիցն օգտուում է մամուլը իւր նշանակութիւնը բարձրացնելու համար» [12]:

Սակայն նշանակության բարձրացման համար շատ հաճախ մեծ գումարներ են ծախսվել արտադրանքի ձևի, բայց ոչ բովանդակության համար: Այս խնդրին Ա. Հովհաննիսյանը անդրադարձել է «Արձագանք»-ի պատկերազարդ հավելվածը տպագրելու ժամանակ և նշել, որ եվրոպական ու ռուսական պատկերազարդ թերթերի մեծագույն մասը լույս վաճառականական, շահախնդրական նպատակով է հրատարակվում, ուստի և այդ հրատարակությունները պարունակում են ամեն ինչ, որ կարող է բաժանորդներ գրավել: Բայց կան և պատկերազարդ հրատարակություններ և այսպիսիների թիվը քիչ չէ, որ գլխավորապես նվիրված են գեղարվեստին: Խմբագիրը շեշտում է. «Մենք ոչ միայն չենք համակրում, այլ և անողոր պիտի մարտնչենք այնպիսի հրատարակությունների դեմ, որոնք տպագրական խօսքը լույս վաճառականական նպատակներին են ծառայեցնում» [14]:

«Տպագրական խոսքը վաճառելու» թեման մշտապես քննարկման առարկա է եղել լրագրության պատմության մեջ: «Արձագանք»-ի էջերում անդրադարձը կատարվել է ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայկական գրահրատարակչական արտադրության օրինակների վրա: Հաճախ թարգմանաբար ներկայացվում էին արտասահմանյան մամուլի տեսաբանների աշխատությունները, որոնցում վերհանվում էին տարբեր երկրներում տարածում ստացող մամուլի ոլորտի բացասական երևույթները:

Ըստ այդմ՝ մամուլի և գրականության գործով զբաղվողները նախապատրաստված, կիրթ ու գրագետ մարդիկ պետք է լինեն, ունենալու են ազգային արժեհամակարգ, որով կարող են նպաստել հասարակության բարոյական զարգացմանը: Խմբագիրը առավել զգոնություն էր պահանջում հատկապես այն խմբագիրներից, որոնք զբաղվում էին մանկապատանեկան գրականության և մամուլի գործով: «Ով որ առանց պատկառելու նպատակի վսեմութիւնից՝ միմիայն շահասիրական նպատակներ ունենալով իւր մտքում, միմիայն փող վաստակելու համար ներս է սլվում այդ սրբարանը և իւր բորբոսնած հացը ձգում է մանուկների առաջ որպէս թաժայ նկանակ, նա այն հայրն է, որ իւր զավակներին հացի փոխանակ քար է տալիս, ձկան փոխանակ՝ օձ» [2]:

Թարգմանական նյութերի միջոցով նաև նպատակ էր դրված հայ հասարակությանը մեկնաբանել պարբերական մամուլի ընդհանուր համակարգը, առկա խնդիրները, ցույց տալ դրական և բացասական կողմերը: Այդ նյութերի միջոցով խմբագրությունը ի վերջո ներկայացնում էր իր դիրքորոշումը արդիական հարցերի նկատմամբ: Օրինակ, «Revue Bleue» պարբերականում տպագրված «Հունաստանի լրագրողները և լրագիրները» հոդվածում ֆրանսիացի լրագրող Գաստոն Դեշամը նշում է, որ հույները երջանիկ ազգ են, քանի որ ծանոթ չեն «պոռնկական գրուածքների հետ: Կարելի չէ պնդել, թե կռուի սաստկանալու միջոցին, նա զրպարտութեան չդիմէր. այդ զենքը ամեն տեղ բանեցվում է քաղաքական պայքարների ժամանակ: Սակայն Աթենքի լրագրողները, որոնք ակներև մանուկներ են, դեռ չեն ծանոթ Ամերիկայից Եւրոպա բերուած նոր գիւտի հետ, որի անունն է դրամական շանտաժ: Աթենքի մամուլը հարստութիւն չէ տալիս, և դա լաւ նշան է» [7]:

«Արձագանք»-ը թարգմանաբար արտատպել է նաև «Новое время» թերթում տպագրված Պ. Սալլիի «Տիեզերական մամուլի բառգիրքը» աշխատությունը, որի մեջ հեղինակը, ներկայացնելով համաշխարհային մամուլի զարգացման օրինաչափությունները, գալիս է այն եզրակացության, որ տվյալ ժամանակաշրջանում «լրագրական գործը բնաւ չէ հնազանդվում հրատարակչի կամ լրագրողի հաճոյքին: Այստեղ էլ, ինչպես ամեն գործի մեջ, առաջարկը յարմարվում է պահանջին և պարբերական թերթն ստիպվում է համակերպուիլ իրեն յայտնուած խնդրին, իսկ լրագրողն այն լինել, ինչ-որ պահանջում է ժամանակը: Լրագիրն ուրիշ բան չէ տալիս, եթե ոչ այն, ինչ որ փափագում է նոյն ինքն ընթերցողը» [16]:

Ճանաչելով և գնահատելով օտարերկրյա պարբերական մամուլի համակար-

զը՝ «Արձագանք»-ի խմբագրակազմը հաճախ է քննադատության արժանացրել հայկական թերթերի և ամսագրերի ծրագրային քաղաքականությունը: Մասնավորապես գլխավոր թիրախ էին թիֆլիսյան պարբերականները: Հնչող քննադատությունները օբյեկտիվ և սուբյեկտիվ դրևորումներ ունեին: Դրանք պայմանավորված էին խմբագրության անդամների միջանձնային հարաբերություններով, միջխմբային համագործակցության հնարավորություններով և զուտ գաղափարական հակասություններով:

Մեղադրանքներն ուղղված էին հրատարակիչներին ու խմբագիրներին, որոնք պատկերազարդ թերթ կամ ամսագիր են հրատարակում և հասարակության ճաշակը փչացնում, «փոխանակ կրթելու, մինչև իսկ չը նայելով, որ այդպիսի հրատարակությունը, օրհնություններով և արժանաւոր բարեկամների անմիտ գովասանքներով համեմված լինի» [15]: Մեղավորության չափաբաժին էր հասնում նաև հասարակությանը, որն առիթ էր տալիս «մամուլին՝ գրականական բարձրությունից իջնել առևտրական ասպարեզը, սպագրական խոսքը դարձնել մուրացկանի աղերսանք» [17]:

Այսպիսով, գրական աշխատանքի և կապիտալի փոխհարաբերության հարցը «Արձագանք»-ի էջերում արժանացել է բազմակողմանի քննության: Քննադատության թիրախում եղել է գաղափարների ապրանքայնացման գործընթացը, ինչն, ըստ խմբագրության, բացասաբար է ազդել մամուլի բովանդակության վրա: Անհանգստության առարկա է դարձել շուկայական հարաբերությունների հաստատումը պարբերական մամուլի համակարգում, ինչը հանգեցրել է լրագրության ապագործառույթային երևույթների ի հայտ գալուն: Միևնույն ժամանակ մտահոգության խնդիր է եղել ցածր պահանջարկի համեմատ առկա բարձր առաջարկը. այս գործոնը բացասաբար էր ազդում թիֆլիսահայ լրագրերի և հանդեսների որակի և հրատարակվելու պարբերականության վրա: Տպագրական գործի ձեռնարկատիրական ոլորտում կարևոր դերակատարում ունեին կապիտալ ունեցող մասնավոր անձինք, քանի որ ստեղծագործական աշխատանքով զբաղվողների վարձատրության խնդիրը հիմնականում լուծվում էր նրանց միջոցով: Ըստ խմբագրության՝ հասարակությունը պետք է ֆինանսավորի պարբերականներին, որպեսզի դրանք անկախ լինեն մասնավոր անձանց կամ ընկերությունների կապիտալից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *** (Տեր-Մելքիսեդեկյան Ա.)²⁰, Լրագրական վիճակագրություն, «Արձագանք», Թիֆլիս, 1882, N24:
2. «Արձագանք», Թիֆլիս, 1883, N13:
3. «Վարժարան» ամսագրի դադարումը, «Արձագանք», Թիֆլիս, 1884, N31:

²⁰ Ծածկանուններով հանդես եկած հեղինակների ազգանուններն ու անունները նշելիս օգտվել ենք **Հովակիմյան Բ.**, Հայոց ծածկանունների բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2005:

4. «Փորձ» և «Արձագանք», «Արձագանք», Թիֆլիս, 1882, N1:
5. **Բարխուդարեանց Մ.**, Նշոյլներ գրականական անիշխանութեան, «Արձագանք», Թիֆլիս, 1885, N10:
6. **Գնունի Ս. (Բարսեղյան Ս.)**, Հեղինակային գրքի ազդ, «Արձագանք», Թիֆլիս, 1884, N40:
7. **Դեշամ Գ.**, Հունաստանի լրագրողները և լրագիրները, «Արձագանք», Թիֆլիս, 1892, N138:
8. Լրագրական բորսայի վաշխառուները Պիղատոսի դերում, «Արձագանք», Թիֆլիս, 1895, N109:
9. Կ. Պոլսեցոց կարծիքը Թիֆլիսի հայ լրագրութեան մասին, «Արձագանք», Թիֆլիս, 1883, N46:
10. **Համբո, Ս.** Էջմիածնի «Արարատ» ամսագիրը իւր ներկա ուղղութեամբ, «Արձագանք», Թիֆլիս, 1884, N3:
11. Հայ պարբերական մամուլի պատմություն (XVIII-XIX դարեր), **Խմբ. կողմ.՝ Խառատյան Ա., Մխիթարյան Ս., Գևորգյան Լ.**, հատոր 1, Գահիրէ, 2006:
12. **Հոժօ (Հովհաննիսյան Հ.)**, Ժամանակակից մամուլը, «Արձագանք», Թիֆլիս, 1892, N10:
13. **Շիրվանզադէ Ալ.**, Կյանքի բովից, Երևան, 1982:
14. Պատկերազարդ «Արձագանք»-ը, «Արձագանք», Թիֆլիս, 1889, N41:
15. Տարեկերջի խորհրդածութիւններ, «Արձագանք», Թիֆլիս, 1891, N52:
16. **Փ. Վ. (Վարդանյան Փ.)**, Արդի լրագրութիւնը, «Արձագանք», Թիֆլիս, 1892, N26:
17. Փոխադարձ ազդեցութիւն, «Արձագանք», Թիֆլիս, 1888, N50:
18. **Փափազյան Վրթ.**, Ինքնակենսագրություն // Երկերի ժողովածու, Հտ. 5, Երևան, 1959:
19. Всеподданейший доклад графа Лориса-Меликова от 12 апреля 1881г., // **Итенберг Б., Твардовская В.**, Граф М. Т. Лорис-Меликов и его современники, Москва, ЗАО Центрполиграф, 2004.
20. **Лемке М.**, Думы журналиста, СПб, 1903.
21. **Летенков Э.**, Печать и капитализм в России конца XIX – начала XX века, экономические и социальные аспекты капитализации печати, автореферат дисс. доктора ист. наук, Ленинград, 1988, <http://www.opentextnn.ru/censorship/russia/dorev/libraries/book/?id=682>.
22. **Лисовский М.**, Периодическая печать в России. 1703-1903 гг., Статистико-библиографический обзор русских периодических изданий, (С диаграммами) // Сборник статей по истории и статистике русской периодической печати, 1703-1903, СПб., 1903.
23. **Победоносцев К.**, Печать, <https://www.sedmitza.ru/lib/text/439876/>.
24. **Таймасова Я.**, Отношение либеральных публицистов «Русских ведомостей» к правительственным реформам 1860-1870-х гг., Дисс. канд. ист. наук., Москва, 2016.

Вопросы взаимосвязи капитала и литературной деятельности в издании «Ардзаганк»

Тарон Даниелян

Резюме

Ключевые слова: *А. Ованнисян, С. Тер-Мелкиседекян, Тифлис, периодическая печать, журнал «Варжаран».*

Вопросы взаимосвязи капитала и литературной деятельности многоаспектно освещались и анализировались на страницах издания «Ардзаганк». Критике подвергался процесс коммодификации идей, что, по мнению редакции, негативно влияло на медиа-контент. Установление рыночных отношений в системе периодической печати стало основной причиной дисфункциональных явлений в журналистике. В то же время озабоченность вызывала несбалансированная пропорция низкого спроса и высокого предложения газет и журналов. Этот фактор также имел отрицательное воздействие на качество контента и выхода в свет армянской периодической печати Тифлиса. В издательском деле, в качестве сферы предпринимательства, главную роль играли частные лица с большим капиталом, так как от них в значительной мере зависело оплата литературного труда. По мнению сотрудников редакции «Ардзаганк» для обеспечения независимости периодических изданий от капитала частных лиц и компаний общественность сама должна финансировать эти издания посредством подписки.

Issues of Interrelation of Capital and Literary Activity in the Publication of “Ardzagank”

Taron Danielyan

Summary

Key words: *A. Hovhannesyan; S. Ter-Meliksedekyan; Tiflis; periodicals; magazine “Varzharan”*

The issues of the interrelation between capital and literary activity were multidimensionally covered and analyzed in the pages of the publication “Ardzagank”. The process of commodification of ideas was criticized, as, in the opinion of the editorial board, it had a negative impact on media content. The establishment of market relations in the system of periodical press was the main cause of dysfunctional phenomena in journalism. In the publishing business, as a sphere of entrepreneurship, private individuals, having large capital, played the main role, since the payment of literary work heavily depended on them. According to the “Ardzagank” editorial board’s staff viewpoint, for ensuring the independence of periodicals from the capital of individuals and companies, the public itself must finance these publications through subscription.